



ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:



Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Տեղական մակարդակում
աղետների/կլիմայական ռիսկերի գնահատում
և կլիմայի փոփոխության հարմարվողականության
ռազմավարությունների ձևավորում.**

Մաս 1


Հունիս 2022 թ.



Համայնքային հարմարվողականության պլանավորում

- ձևակերպել նպատակը
- մշակել շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
- հավաքագրել կլիմայի փոփոխության միտումների և կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվություն

- մոբիլիզացնել անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսները
- ներգրավել համագործակցող կողմերին
- իրականացում և մոնիթորինգ
- 5-10 տարվա ընթացքում կրկնել գործընթացը



- ճանաչել ԿՓ նկատմամբ համայնքի խոցելիությունը
- գնահատել համայնքին սպառնացող կլիմայական ռիսկերը
- սահմանել ռիսկերի գերակայությունը

- ձևավորել հարմարվողականության լուծումները
- սահմանել առաջնահերթությունները
- մշակել հարմարվողականության պլանը

ՎՏԱՆԳՆԵՐ

ԿԼԻՄԱՅԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ,
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ,
ԻՐԱՎԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ,
ԿՐԹԱԿԱՆ,
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՆԹԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀՄԱՐԱՎՈՐ
ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

+

-

-

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Կլիմա - Աշխարհագրական որոշակի տարածքի երկարաժամկետ եղանակային ռեժիմ: Կլիմայի նկարագրությունը ներառում է վիճակագրական տեղեկատվություն տարվա տարբեր եղանակներին միջին ջերմաստիճանի, խոնավության, տեղումների, քամիների, արևային օրերի մասին և այլն: Կլիմայի բնութագրման համար միջազգայնորեն ընդունված ժամանակահատվածը 30 տարի է (սահմանված է Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՄՈԿ) կողմից):

Կլիմայի փոփոխություն - Կլիմայական բնութագրիչների բազմամյա միջին տվյալների վիճակագրական փոփոխություններ /ջերմաստիճան, տեղումներ, քամի, խոնավություն և այլն//IPCC 2014/: Դրանք կարող են պայմանավորված լինել բնական գործոններով (արեգակնային ակտիվություն կամ Երկրի ուղեծրի փոփոխություններ, հրաբխային ակտիվության ուժեղացում, կլիմայական համակարգի բնական ներքին գործընթացներ) և/կամ մթնոլորտի բաղադրության մեջ փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեությամբ:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ենթարկվածություն – Բացասական ազդեցության ենթակա վայրերում մարդկանց, ապրուստի միջոցների, տեսակների կամ էկոհամակարգերի, բնապահպանական գործառույթների, ծառայությունների և ռեսուրսների, ենթակառուցվածքների կամ տնտեսական, սոցիալական կամ մշակութային արժեքների առկայություն: /UNDRR, 2017/:


Զգայունություն – Համակարգի կլիմայով պայմանավորված խթանիչ գործոնների դրական կամ բացասական ազդեցությանը ենթարկվելու աստիճան: Ազդեցությունը կարող է լինել ուղղակի /բերքատվության անկում վաղ գարնանային ցրտահարության արդյունքում/ կամ անուղղակի /բերքի կորուստ հորդառատ անձրևների պատճառով առաջացած հեղեղումների արդյունքում/:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԿՓ նկատմամբ խոցելիություն – Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների և վտանգների նկատմամբ որևէ տեսակի, համակարգի կամ ռեսուրսի ենթակա լինելու աստիճան: Խոցելիությունը ներառում է մի շարք հասկացություններ և տարրեր, ներառյալ կլիմայական վտանգներին համակարգի ենթարկվածությունը, վերջինիս զգայունությունը և հաղթահարելու/հարմարվելու կարողությունների բացակայությունը: Խոցելիությունը **Ֆունկցիա է համակարգի ենթարկվածությունից /հետագայում՝ ենթարկվածություն/, զգայունությունից և հարմարվողականության կարողություններից**: Խոցելիության գնահատումը օգտգործվում է հարմարվողականության միջոցառումների պլանավորման նպատակով:

Հարմարվողականության կարողություններ – Կլիմայի փոփոխությանը հարմարվելու համակարգի կարողություններ՝ հնարավոր վնասները մեղմելու, հետևանքները հաղթահարելու կամ հանգամանքների բերումով ի հայտ եկած նոր հնարավորություններից օգտվելու համար: /IPCC, MEA 2005/:

$$N = V \times H$$



Աղետի ռիսկի
խոցելիություն
 $H = C \times L$

Կլիմայական ռիսկի
խոցելիություն
 $H = C \times R/L$

- N** – աղետի ռիսկ/կլիմայական ռիսկ
- V** – վտանգի կայանալու հավանականություն
- H** – խոցելիություն
- C** – ենթարկվածություն
- R** – զգայունություն
- L** – հարմարվողականության կարողություններ

Ռիսկի գնահատում

I. ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

II. ՌԻՍԿԻ
ԲԱՂԱԴՐԻՉԵՐԻ
ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

III. ՌԻՍԿԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ
ՏԵՂՈՒՄ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՌԻՍԿԻ ԲԱՂԱԴՐԻՉԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՒՄ

ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ
ՃՇԳՐՏՈՒՄ

ՌԻՍԿԻ ԲԱՂԱԴՐԻՉԵՐԻ
ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ
ԳԵՐԱԿԱ ՌԻՍԿԵՐԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌՆ / ԿՓՀ

ՀՆԱՐԱՎՈՐ
ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ԱՌԱՋՆԱՅԻՆ
ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԻՆՏԵԳՐՈՒՄ
ՋԱՐԳԱՅՄԱՆ
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ

Իրականացվում է Տեղական մակարդակում ռիսկի կառավարման (ՏՄՌԿ) մեթոդաբանությամբ, որի հիմքում ընկած է ԿԽԿՄՄՖ վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման (ՎԽԿԲ) գործիքը: